

<https://doi.org/10.59546/18290744-2023.10-12-123>

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ  
*իրավաբանական գիտությունների թեկնածու,  
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և  
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և  
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս*

ADELINA SARGSYAN  
*PhD in Law,  
Lecturer of the Department of Criminal Law and  
Criminal Procedure Law of the  
Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

АДЕЛИНА САРГСЯН  
*кандидат юридических наук,  
преподаватель кафедры уголовного права и  
уголовно-процессуального права  
Института права и политики Российско-Армянского университета*

**ՅԱՏՐՈԳԵՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ  
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**CRIMINOLOGICAL CHARACTERISTICS AND PREVENTION OF  
IATROGENIC CRIME IN THE REPUBLIC OF ARMENIA**

**КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И ПРЕДУПРЕЖДЕНИЕ  
ЯТРОГЕННОЙ ПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական  
աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E012):*

**Ներածություն**

Քաղաքացիների առողջության պահպանումը պետության կարևորագույն խնդիրներից է: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք», իսկ մարդու առողջությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում հանդես է գալիս որպես քրեահրավական պահպանության ինքնուրույն օբյեկտ: Հաշվի առնելով առողջապահական համակարգի խոցելիությունը, դրանում առկա թերությունները, ներառյալ ինչպես կազմակերպչական, կառավարչական, մասնագիտական, էթիկական, այնպես էլ իրա-

վական բնույթի բացերը՝ օբյեկտիվ անհրաժեշտություն կա բացահայտելու յատրոգեն հանցավորության հիմնական պատճառները և դրա պատշաճ քրեաբանական կանխարգելումը:

Բժշկական գործունեության մեջ յատրոգենիաների խնդիրը, որը հանգեցնում է մահվան, մարդկանց հաշմանդամ է դարձնում, ուղղակիորեն ազդում է նրանց կյանքի որակի անկման վրա:

Քաղաքացիներին անորակ և անբարեխիղճ բուժօգնություն ցուցաբերելը և այլ յատրոգեն հանցագործությունները հատուկ ուշադրություն են պահանջում ինչպես առողջապահության նախարարության, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից: Յատրոգեն հանցավորության վիճակի վերաբերյալ որոշակի պատկերացում կարելի է կազմել ուսումնասիրելով պրակտիկան: Մեծ նշանակություն ունեն նաև լրատվամիջոցների ռեզոնանսային հաղորդագրությունները: Առկա դատական պրակտիկայի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ամենատարածված յատրոգենիաները և մշակելու դրանց կանխարգելման մի շարք միջոցառումներ:

Պետք է փաստել, որ յատրոգեն հանցագործությունների վերաբերյալ առկա պաշտոնական վիճակագրությունը, ցավոք, չի արտացոլում իրողությունը, ինչը, հետևաբար, թույլ չի տալիս արժանահավատորեն դատել վերլուծվող հանցատեսակի դինամիկայի և վիճակի մասին: Նշվածը բացասաբար է անդրադառնում յատրոգեն հանցագործությունների կանխմանն ուղղված մի շարք միջոցառումների մշակման վրա: Այսպես, յատրոգեն հանցագործությունների լատենտության և բացահայտման ցածր մակարդակի մասին է վկայում ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի վիճակագրությունը յատրոգեն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քանակի վերաբերյալ, որոնք ներառում են դատաքննությանը հասած, ինչպես նաև ոչ ռեաբիլիտացիոն հիմքերով կարճված գործերը:

2018-2021 թվականների վիճակագրությունն արտացոլում է հետևյալ պատկերը՝

➤ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1 և 2 մասերը՝

- 2018 թ. - 130-րդ հոդվածի 1-ին մաս - 28 քրեական գործ, 130-րդ հոդվածի 2-րդ մաս - 83 քրեական գործ,
- 2019 թ. - 130-րդ հոդվածի 1-ին մաս - 36 քրեական գործ, 130-րդ հոդվածի 2-րդ մաս - 107 քրեական գործ,
- 2020 թ. - 130-րդ հոդվածի 1-ին մաս - 23 քրեական գործ, 130-րդ հոդվածի 2-րդ մաս - 139 քրեական գործ,
- 2021 թ. 130-րդ հոդվածի 1-ին մաս - 9 քրեական գործ, 130-րդ հոդվածի 2-րդ մաս - 100 քրեական գործ:

➤ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածը՝ փոխպատվաստում կատարելու կանոնները խախտելը՝

- 2018 թ. - 1 քրեական գործ,
- 2019 թ.՝ 1 քրեական գործ:

➤ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածը՝ ապօրինի աբորտ կատարելը.

- 2019 թ. - 2 քրեական գործ,
- 2021 թ.՝ 1 քրեական գործ:

Ցավոք, ներկայացված վիճակագրությունը չի արտացոլում հայաստանյան իրականության, մասնավորապես՝ առողջապահության ոլորտում հանցավորության իրողությունները: Վերարտադրողական ոլորտի հանցագործությունները շատ տարածված են, սակայն, ինչպես տեսնում ենք, դրանց լատենտության պատճառով դրանց գերակշիռ մասը մնում է չբացահայտված:

### Հիմնական հետազոտություն

Տալով յատրոգեն հանցագործության քրեաբանական բնութագիրը՝ հարկ է նշել դրանց լատենտության բարձր աստիճանը և բժշկական աշխատողների կորպորատիվ էթիկայի (սովորական) մասին, ինչը, անշուշտ, դժվարացնում է յատրոգեն հանցագործությունների կանխարգելումը: Յատրոգեն հանցագործության լատենտային բնույթն ուղղակիորեն փոխկապակցված է կորպորատիվ էթիկայի հետ:

Յատրոգեն հանցավորության հաջորդ դետերմինանտը բժշկական աշխատողների մասնագիտական (հուզական) այրման համախտանիշն է: Այդ համախտանիշը, որպես կանոն, բնորոշ է բժշկական մասնագետների միջին տարիքի խմբին և որպես բժշկական օգնության ոչ պատշաճ մատուցման պատճառներից մեկն է<sup>1</sup>: Բժշկական օգնություն ցուցաբերելիս անզգույշ հանցագործությունների կատարումը որոշող բարոյահոգեբանական գործոնները հիմնված են բժշկական անձնակազմի հուզական, մտավոր և ֆիզիկական ծանրաբեռնվածության բարձր մակարդակի վրա, ինչը հանգեցնում է հուզական այրման համախտանիշի զարգացմանը<sup>2</sup>: Բժշկական աշխատողները, իրենց մասնագիտական գործունեության բնույթով, երբեմն ստիպված են աշխատել լարված, սթրեսային պայմաններում, որոնք հաճախ պահանջում են հրատապ որոշումներ կայացնել, մասնագիտական գործունեության հուզականորեն հագեցած պայմանները, օրվա ընթացքում մեծաթիվ հիվանդների հետ շփումը, նրանց պատշաճ ուշադրություն դարձնելը, չի կարող բացասաբար չանդրադառնալ բժիշկների սթրեսի դիմադրության, նրանց հուզական հյուծվածության վրա, ի վերջո ազդելով նրանց ուշադրության մակարդակի վրա: Այսպիսով, բուժաշխատողների մոտ նկատվում է դիմադրության փուլի սկիզբ, որն արտահայտվում է հիվանդների բացասական հուզական ընկալմամբ, հոգնածությամբ և մասնագիտական պարտականությունների որակի նվազմամբ: Մասնագիտական հոգնածությունը պայմանավորող գործոնների թվում անհրաժեշտ է նաև նշել բուժաշխատողների չափազանց ծանրաբեռնվածությունը, ոչ նորմավորված աշխատանքային գրաֆիկը: 2019 թվականին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հիվանդությունների միջազգային դասակարգման մեջ ներառեց «այրման սինդրոմը»: Անհրաժեշտ է նշել նաև բժշկական հաստատության կադրային քաղաքականությունը, դրանում կատարված անբավարար մասնագիտական ընտրությունը: Նպատակահարմար ենք համարում բուժաշխատողների (հատկապես շտապ օգնության բրիգադների) ծանրաբեռնվածության արմատական փոփոխությունն ու կրճատումը, այդ թվում՝ հաստիքների ավելացման և աշխատավարձերի բարձրացման միջոցով:

Այսպիսով, յատրոգեն հանցավորության կանխարգելումը համակարգված մոտեցում է պահանջում, առաջին հերթին՝ համապետական մակարդակով: Ներկայումս բացակայում է բուժաշխատողների կողմից կատարվող հանցագործությունների կանխարգելման հիմնական դրույթներն ու միջոցառումները ամրագրող համալիր օրենք կամ ռազմավարություն: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ այդ օրենքը կամ ծրագիրը/ռազմավարությունը մշակելիս պահանջվում է տարբեր գիտությունների ներկայացուցիչների համակարգված աշխատանք՝ իրավաբանական, բժշկական, հոգեբանական և այլն: Այսպիսով, ըստ Ա. Ի. Դուգովի արդար դիտարկման, իրավական տեսանկյունից, բուժաշխատողների կողմից կատարված հանցագործությունների կանխարգելման համար առաջնային նշանակություն ունեն լայնածավալ պե-

<sup>1</sup> *Большакова Т. В.*, Личностные выгорания у медицинских работников: Дис. ... канд. псих. Наук, Ярославль, 2004, с. 187-193.

<sup>2</sup> *Габай П. Г.*, Предупреждение неосторожной преступности при оказании медицинской помощи, диссертация ... кандидата юридических наук: 12.00.08, Москва, 2021, с. 23.

տական միջոցառումները, որոնք համատեղում են ընդհանուր և հատուկ նախագաղափարային միջոցները<sup>3</sup>: Նշված ակտը մշակելիս պետք է ներգրավված լինեն առողջապահության համակարգի ներկայացուցիչները, ՀՀ առողջապահության նախարարությունը, վերահսկողական մարմինները, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ գլխավոր դատախազությունը: Բժշկական օգնության որակի բարձրացման և յատրոգեն հանցագործությունների կանխարգելման հիմնական դրույթների շարքում անհրաժեշտ ենք համարում բժշկական օգնություն ցուցաբերելիս բուժաշխատողների հանցագործությունների և վարչական/քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարցերով ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ առողջապահության նախարարության և այլ լիազոր մարմինների փոխգործակցության հիմնական մեխանիզմների ամրագրումը:

Բժշկական աշխատողների մասնագիտական ոչ կոմպետենտության և անբարեխղճության հետ կապված, դետերմինանտների թվում պետք է առանձնացնել նաև աշխարհագրական գործոնը, որն ընդգրկում է տարածաշրջանային (գյուղական) առողջապահության խնդիրները: Բժշկական հաստատությունների պատշաճ նյութատեխնիկական հագեցվածության բացակայությունը, անձնակազմի մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակն իրենց ամբողջության մեջ հանգեցնում են հեռավոր քաղաքներում բժշկական հանցագործությունների աճին: Որպես կազմակերպչական կարգի քրեաբանական միջոց, անհրաժեշտ է թվում բարձրացնել բժշկական հաստատությունների հագեցվածության մակարդակն անհրաժեշտ ժամանակակից սարքավորումներով, դեղամիջոցներով, ինչը կստեղծի առավել բարենպաստ պայմաններ որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու համար և որոշ չափով կնվազեցնի քրեական յատրոգենիաների մասնաբաժինը: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում (Շիրակի մարզ) արձանագրվել է դեպք, երբ բժիշկն իր մասնագիտական ոչ կոմպետենտության պատճառով հիվանդին բերել է անաֆիլակտիկ շոկի վիճակի, սակայն հետո չի կարողացել նրան դուրս բերել այդ վիճակից՝ բուժհաստատությունում համապատասխան դեղամիջոցների բացակայության պատճառով<sup>4</sup>: Միևնույն ժամանակ, բաժանմունքին անհրաժեշտ ամեն ինչ մատակարարելու բավարարությունը մեծապես կախված է բժշկի գործունեությունից, որը համառորեն տեղեկացնում է բաժանմունքի ղեկավարին թերությունների և այն մասին, թե ինչ է անհրաժեշտ, իսկ վերջինս, իր հերթին, բժշկական հաստատության վարչակազմին և դեղաբանական կոմիտեին<sup>5</sup>:

Բժշկական հանցագործությունների կանխարգելման միջոցառումների համալիրն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են հենց առողջապահության ոլորտի առանձնահատկություններով: Այստեղ անհրաժեշտ է համակարգված մոտեցման մշակում, որը համատեղում է առողջապահության ոլորտի նորմատիվ-իրավական հիմքի կատարելագործումը, բուժօգնության որակի նկատմամբ վերահսկողության ուժեղացումը, բուժանձնակազմի մասնագիտական կոմպետենտության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև նրանց աշխատավարձերի բարձրացումը: Յատրոգեն հանցավորության կանխարգելման միջոցառումների համակարգը պետք է դիտարկել երկու մակարդակում՝ ընդհանուր սոցիալական և հատուկ քրեաբանական միջոցառումներ: Առողջապահության ներկայիս համակարգը պահանջում է զգալի կատարելագործում, ինչը, ըստ էության, ընդգրկված է յատրոգեն

<sup>3</sup> Долгов А. И., Выступление на заседании Российской криминологической ассоциации от 20.04.2007 г. по теме «О криминологической ситуации в медицине».

<sup>4</sup> Ֆուրման Մարդոյանի գործով 27.06.2011 թ. ՇԴ/0105/01/11 որոշումը:

<sup>5</sup> Назаров И. П., Деонтология и врачебная этика в хирургии, анестезиологии и реаниматологии // Сибирское медицинское обозрение, 2004.

հանցավորության կանխարգելման ընդհանուր սոցիալական միջոցառումների շրջանակներում:

Բժշկական հանցագործությունների կանխարգելման իրավական միջոցառումների շարքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել քննության խնդիրներին:

Իրավապահ մարմինների աշխատակիցների պատշաճ նեղ մասնագիտացված վերապատրաստման բացակայությունը, բժշկության ոլորտում նրանց հատուկ գիտելիքների առկայությունը բացասաբար են անդրադառնում յատրոգեն հանցավորության կանխարգելման հարցում:

Քրեաբանական տեսանկյունից անհրաժեշտ է լրացուցիչ վերլուծության ենթարկել բուժաշխատողների կողմից թույլատրված հանցավոր յատրոգենիաների դրսևորումները:

Մի դեպքում յատրոգենիան կարող է լինել բժշկի մասնագիտական անբարեխղճության հետևանք, որի դեպքում բժիշկն անտեսում է իր մասնագիտական պարտականությունները, ցույց է տալիս դրանց նկատմամբ ձևական մոտեցում, անուշադրություն, արհամարհական վերաբերմունք (ներառյալ ուղղակիորեն հիվանդի վիճակի, նրա բողոքների անտեսումը): Մեկ այլ դեպքում յատրոգենիան տեղի է ունենում բժշկի մասնագիտական հանցավոր տգիտության (մասնագիտական ոչ կոմպետենտության) արդյունքում, քանի որ վերջինս չունի համապատասխան գիտելիքներ և որակավորում՝ որոշակի տեսակի բժշկական գործունեություն իրականացնելու համար:

Երկու դեպքերն էլ պահանջում են դրանց կանխարգելման տարբեր քրեաբանական միջոցառումների մշակում:

Ակադեմիկոս Յու. Պ. Էդելը տալիս է մասնագիտական տգիտության հետևյալ սահմանումը. «Բժշկի անգրագետ գործողությունները պետք է ներառեն նրա անկարողությունը, ամենապարզ դեպքերում, առկա տվյալներից ճիշտ եզրակացություն անելու համար, այսինքն՝ հաստատել ճշգրիտ ախտորոշում: Տգետ պետք է համարել այնպիսի բժշկի, որը որոշակի կոնկրետ դեպքում դրսևորել է տարրական գիտելիքների բացակայություն, որոնք պարտավոր են ունենալ բոլոր բժիշկները»:

Եվրոպական երկրների մեծ մասում գործում էր Չարլզ V - «Կարոլինա» քրեական օրենսգիրքը (1532), ըստ որի՝ բժիշկը ենթակա էր պատժի հիվանդի մահվան համար, եթե դա տեղի է ունեցել անբավարար խնամքի կամ անտեղյակության, բժշկական գիտելիքների անլուրջ կամ սխալ օգտագործման, ոչ գիտական և անընդունելի բուժման մեթոդների օգտագործման հետևանքով և այլն: Նման դեպքերում մասնագետների կողմից նախատեսվում էր հանձնաժողով անցկացնել՝ մեղքը պարզելու համար<sup>6</sup>:

Մասնագիտական տգիտությունը և դրա պատշաճ ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նաև համապատասխան անձանց պատշաճ կանխարգելիչ ներգործության գործում:

Հանցավոր տգիտությունը «մասնագետի կողմից իր մասնագիտության կանոնները անտեղյակությունն է, որը հանգեցրել է մարդկանց հետ դժբախտ պատահարների կամ այլ ծանր հետևանքների»:<sup>7</sup>

Այսպես՝ Մ. Ս. Գրինբերգն առանձնացնում է տգիտության հետևյալ ձևերը՝

- անձն անտեղյակ է նրանից, ինչը նա պարտավոր էր և հնարավորություն ուներ իմանալու,

<sup>6</sup> Воропаев А. В., Диллис А. Д., Исаев Ю. С., Профессиональная ответственность медицинских работников (сообщение i) // Байкальский медицинский журнал, 2005, с. 108.

<sup>7</sup> Гринберг М. С., Уголовное право: избр. тр. / науч. ред. М. С. Фокин, Омск, 2012, с. 517.

- մասնագիտական և այլ իրավասությունների սահմաններից դիտավորյալ դուրս գալը,
- հնարավոր վնասի չնախատեսում կամ դրա կանխարգելման անլուրջ հաշվարկ<sup>8</sup>:

Ժամանակակից հասարակության մեջ մարդը պետք է պատասխանատու լինի այն բանի համար, որ նա պատասխանատվություն է ստանձնում այն գործունեության կամ գործողությունների համար, որոնց հետևանքները նա ի վիճակի չէ հաղթահարել: Այսպիսով, պետք է պատասխան տա վիրաբույժը, որն անգրագետ է կատարել վիրահատությունը (որի արդյունքում հիվանդը մահացել է), բայց ով ավելի լավ չէր կարող կատարել այս վիրահատությունը, քանի որ նա վատ էր սովորում, չնայած ավարտել էր բժշկական ինստիտուտը, նա ավելի լավ չէր կարողանում գործել, բայց պետք է, եթե նա նման գործունեություն է ծավալում: Նման դեպքերում մասնագետի մեղքն այն է, որ նա գիտելիքներ չի ձեռք բերել, գործի է անցել և զբաղեցրել է այնպիսի պաշտոն, որի համար պիտանի չի եղել<sup>9</sup>:

Երիտասարդ մասնագետների մոտ 40 %-ը բառի ամբողջ իմաստով մասնագիտական տգիտություն է հայտնաբերում. չեն կարողանում կատարել ամենապարզ վիրահատությունը, կարդալ էլեկտրասրտագրություն և ռենտգենագրություն և այլն<sup>10</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ևս բազմիցս արձանագրվել են բուժաշխատողների մասնագիտական անտեղյակության դեպքեր: Մասնավորապես, նման բան մեր կողմից հաստատվել է թիվ ԱՎԴ/0123/01/11 Ալեքսանդր Ֆանյանի գործով որոշման մեջ: Ալեքսանդր Ֆանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, աշխատելով «Վեդի» ԲԿ-ում որպես անեսթեզիոլոգ, «Օղակաձև ճողվածք» հիվանդությամբ հիվանդանոց ընդունված Արալեզ գյուղի բնակիչ Գ.-ին ցուցաբերել է բժշկական օգնություն և սպասարկում, որտեղ վիրահատության նախապատրաստվելիս, սխալ մեկնաբանելով էլեկտրասրտագրությունը, ոչ պատշաճ կատարել է իր մասնագիտական պարտականությունները և դրա նկատմամբ անփոյթ վերաբերմունքի հետևանքով անզգուշությամբ առաջացրել է հիվանդի մահ:

Միևնույն ժամանակ, այս օրինակի մանրամասն և խորը վերլուծությամբ առաջանում են այլ հարցեր, որոնք պահանջում են իրենց պատասխանը: Մասնավորապես, ինչպես տեսնում ենք, այս դեպքում էՍԳ ժապավենը սխալ է մեկնաբանվել բժիշկ-անեսթեզիոլոգի կողմից, այլ ոչ թե սրտաբանի, որի անմիջական իրավասության մեջ է մտնում տվյալ գործողությունը: Այս դեպքում հարց է առաջանում այս մասում հանցագործության սուբյեկտի և այն մասին, թե որքանով է հիմնավորված անձին դատապարտել այն բանի համար, ինչը նա չպետք է իմանար: Ոչ պակաս անիմաստ է թռիչքի ժամանակ չպատրաստված անձից ինքնաթիռ վարելու ունակություն պահանջելը կամ առնվազն այդ հմտությունը քննարկելը, քան կույրերի գույները տարբերելու ունակությունը քննարկելը<sup>11</sup>:

Նշվածի առնչությամբ միանգամայն արդարացի և ուշադրության արժանի է այն դատողությունը, ըստ որի՝ «Ըստ այդմ անձին մասնագիտորեն անգրագետ, տեխնիկապես սխալ գործողություն մեղաագրելու պարտադիր պայմանը նրան որոշակի գործունեության նախապատրաստելու փաստի հաստատումն է՝ ուսուցում ինչ-որ ուսումնական հաստատությունում, որոշակի փաստաթղթի հետ մեկնագամյա ծանոթացում և այլն: Նման վերապատրաստման բացակայությունը նշանակում է անձի անկարողություն որոշակի տեսակի գործունեության

<sup>8</sup> *Гринберг М. С.*, там же.

<sup>9</sup> *Гринберг М. С.*, Преступное невежество как форма преступной неосторожности // Вестник Омского университета, 2009, с. 226.

<sup>10</sup> *Гринберг М. С.*, Преступное невежество // Вестник Омского университета, 2011.

<sup>11</sup> *Гринберг М. С.*, Преступное невежество как форма преступной неосторожности // Вестник Омского университета, 2009, с. 225.

համար, նրան դուրս է բերում այն մարդկանց շրջանակից, ովքեր կարող են պատասխանատվություն կրել այս գործունեության ոչ պատշաճ իրականացման համար»<sup>12</sup>:

Բացի վերը նշվածից՝ ԷՍԳ ժապավենը սխալ մեկնաբանելու համար անեսթեզիոլոգի քրեական պատասխանատվության վրա հասնելու կամ չհասնելու հարցի դեպքում առաջանում է նաև քրեաբանական խնդիր. այն է՝ համապատասխան կադրերի պակասը, որը հանգեցնում է քաղաքացիների որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու իրավունքի խախտմանը:

Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում հանցավոր տգիտության մեկ այլ օրինակ է Լուսինե Ոսկանյանի գործով թիվ ՍԴ /0120/01/09 որոշումը: 2008 թ. հունիսի 4-ին արյան մեջ գլյուկոզայի բարձր պարունակության պայմաններում սուր ապենդիցիտ, տեղային ֆիբրինոգ-թարախային պերիտոնիտ ախտորոշմամբ վիրահատության նախապիրահատական և հետվիրահատական շրջանում ընդունված հիվանդ Անդրանիկ Գրիգորյանին բժշկ Լուսինե Ոսկանյանը ներարկել է տվյալ դեպքում հակացուցված 5օ/ո 500-ական մլ գլյուկոզ, ինչը ևս հաստատում է տվյալ դեպքում հանցավոր տգիտությունը՝ որպես նման գործողությունների արդյունք:

Հատկանշական է, որ նույնիսկ ֆունկցիոնալ պարտականությունների կատարման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի դեպքում հնարավոր է անզգույշ հանցագործություն կատարել (օրինակ՝ մասնագիտական տգիտության հետևանքով)<sup>13</sup>:

Հանցավոր տգիտության ակունքները բազմաբովանդակ են՝ սկսած համալսարանում ստացած կրթության որակից, վերջացրած բժշկի անմիջական հետաքրքրությամբ իր մասնագիտական գործունեության մեջ: Անհրաժեշտ է նշել նաև բժշկական հաստատության կադրային քաղաքականությունը, դրանում կատարված անբավարար մասնագիտական ընտրությունը:

Հասարակության գիտական, տեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացումն ուղղակիորեն կախված է անհատի հոգևոր աշխարհի վիճակից, նրա ներդաշնակ զարգացումից, քաղաքացիական դիրքից և սոցիալ-մշակութային ձգտումից: Դա առավել արդիականացնում է գիտական հանրության կողմից մասնագիտական տգիտության դեմ պայքարելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ նրանց պատրաստման ընթացքում<sup>14</sup>: Ն. Ա. Ագեևան նշում է. «Ռուսաստանի ընտանիքի հոգևոր և բարոյական հիմքերի վերածննդի գործում պետական քաղաքականության ռազմավարության միասնական առանցքը կարող է լինել կրթության և վերապատրաստման միասնական մոտեցումների մշակումը՝ հիմնվելով Բիոէթիկայի սկզբունքների վրա՝ որպես ժամանակակից գիտության նոր սինթետիկ ուղղություն, որը կենտրոնացած է համամարդկային արժեքների վրա և երիտասարդ սերնդին կողմնորոշում է դեպի փոխակերպող-ստեղծագործական գործունեություն երկրի վրա կյանքի պահպանման գործում»<sup>15</sup>:

Ներկայումս օբյեկտիվ անհրաժեշտություն կա ուժեղացնել միջոցառումները, որոնք ուղղված են բժշկական համալսարանների ընդունելության և ավարտական պահանջների խստացմանը: Պետության բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն բուժաշխատողների մաս-

<sup>12</sup> Гринберг М. С., там же. с. 228.

<sup>13</sup> Глушков В. А., Ответственность за преступления в области здравоохранения, Киев: Вища школа, 1987, с. 300.

<sup>14</sup> Ерохин С. А., Этико-правовой аспект невежества в контексте медицинской деятельности // Современные научные исследования и инновации, 2015, № 10 (54), с. 367.

<sup>15</sup> Агеева Н. А., Социальное воспитание как ведущий фактор всестороннего развития личности детей и молодежи // Гуманитарные научные исследования, 2015, № 2 (42), с. 165.

նագիտական գրագիտության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նրանց մեջ պատասխանատվության և բարեխղճության զգացողության զարգացմանը: Գիտելիքը փչացող արտադրանք է, այն ի վիճակի է հնանալ և փոփոխվել, ուստի յուրաքանչյուր մասնագետ պետք է պարբերաբար զբաղվի ինքնակրթությամբ<sup>16</sup>: Նշվածի կապակցությամբ կարևորվում է շարունակական բժշկական կրթությունը, պետության կողմից տարբեր ստաժավորումների, բուժաշխատողների որակավորման բարձրացման ծրագրերի ֆինանսավորումը, հատկապես նոր սարքավորումների շահագործման կամ վիրահատության անցկացման նոր տեխնոլոգիաների ներդրման ժամանակ և այլն: Մինչդեռ բժշկական աշխատողների կանոնավոր, մատչելի և որակյալ կրթությունը, որը ներառում է էական բժշկական և իրավական բաղադրիչ, կարող է արդյունավետ դեր խաղալ բժշկական օգնության տրամադրման գործում անզգույշ հանցագործությունների կանխարգելման գործում<sup>17</sup>: Այսպիսով, յատրոգեն հանցավորության կանխարգելման ոլորտում պետության քաղաքականության ուղղություններից մեկը պետք է լինի բուժաշխատողների բարոյական նորացումը և նրանց մասնագիտական մշակույթի մակարդակի բարձրացումը: Գիտության և տեխնոլոգիայի առաջընթացը ակտիվացնում է հասարակությունը բարձրագույն կրթության նոր արժեքանակական հիմքերի որոնման և բժշկական համալսարանների մանկավարժական գործընթացի կազմակերպման համար՝ հաշվի առնելով բժշկական համալսարանի ուսանողների սոցիալական և մասնագիտական պատասխանատվության ձևավորման արդյունավետությունը բիոէթիկայի ժամանակակից նվաճումների համատեքստում<sup>18</sup>:

Մեծ է բարձրագույն ուսումնական հաստատության կրթության և կրթական քաղաքականության կարևորությունը ապագա բուժաշխատողների սերնդի դաստիարակության գործում՝ մասնագիտական անբարեխղճության հետևանքով հետագայում նրանց կողմից յատրոգեն հանցագործությունների կատարումը կանխելու նպատակով: Գ. Ն. Շապովալին իրավացիորեն շեշտում է սոցիալապես օգտակար գործունեության դերը բժշկական ուսանողների քաղաքացիական գործունեության ձևավորման ընթացքում՝ հատուկ ուշադրություն դարձնելով հայրենասիրության դաստիարակությանը ուսումնական էքսկուրսիաների և կամավորական նախաձեռնությունների միջոցով՝ շեշտը դնելով բժշկական համալսարանի մանկավարժական գործընթացի շրջանակում հումանիտար առարկաների առաջատար դերի վրա և դրանց ներդրումն ապագա բժշկի անձի սոցիալականացման գործընթացում<sup>19</sup>: Բժշկական համալսարանի ուսանողների սոցիալականացման գործընթացում մեծ է նաև ուսուցչի անձի դերը՝ որպես մշակութային և սոցիալական նորմերի գլխավոր վերահեռարձակող<sup>20</sup>:

Անզգայացում տվող անեսթեզիոլոգների համար միանգամայն պարտադիր և, այնուամենայնիվ, հաճախ խախտվող դեոնտոլոգիական պահանջն այն է, որ բժիշկները վիրահատության ընթացքում և դրա ավարտից հետո չհեռանան իրենց հիվանդներից, այլ մնան նրանց

<sup>16</sup> *Агеева Н. А.*, Социокультурный аспект невежества // Актуальные вопросы общественных наук: социология, политология, философия, история, 2014.

<sup>17</sup> *Габай П. Г.*, Предупреждение неосторожной преступности при оказании медицинской помощи, Дисс. ...на соиск. уч.ст. к.ю.н. 2021, с. 153.

<sup>18</sup> *Агеева Н. А.*, Профессиональная культура как нравственный императив деятельности врача // Гуманитарные и социальные науки, 2013.

<sup>19</sup> *Шаповал Г. Н.*, Роль социально-полезной деятельности в ходе становления гражданско-правовой активности у студентов-медиков // Инновации в науке, 2015, № 48, с. 86.

<sup>20</sup> *Шаповал Г. Н.*, Личность преподавателя как главного ретранслятора культурных и социальных норм при обучении иностранных студентов // Актуальные вопросы общественных наук: социология, политология, философия, история, 2013, № 32, с. 49.



հետ մինչև հիվանդասենյակ տեղափոխելը և հիվանդասենյակին հանձնելը կամ մինչև հիվանդների ամբողջական արթնացումը: Այս կանոնի չկատարումը կարող է ունենալ ամենածանր հետևանքները՝ ընդհուպ մինչև մահացու ելքեր: Հիվանդի ամենահուսալի մոնիտորինգն անեսթեզիոլոգի շարունակական հսկողությունն է: Միայն այս կերպ կարելի է անմիջապես նկատել հիվանդների վիճակի ամենափոքր տեղաշարժերը և ձեռնարկել հրատապ կանխարգելիչ կամ բուժական միջոցառումներ<sup>21</sup>:

Հարկ է նշել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 174-Լ որոշմամբ ռազմավարական կարևոր փաստաթղթի՝ առողջապահության զարգացման 2023-2026 թվականների ռազմավարության ընդունման մասին: Ռազմավարության նպատակն է սահմանել ոլորտի զարգացման ուղենիշներն առաջիկա տարիների համար՝ ուղղված Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության պահպանմանը, հիվանդացության և վաղաժամ մահացության նվազեցմանը, կյանքի որակի բարելավմանը և կյանքի միջին տևողության երկարացմանը<sup>22</sup>: Ռազմավարության հիմնական ուղղությունների թվում, ի թիվս այլոց, նշվում է նաև որակյալ և արդյունավետ բժշկական օգնության տրամադրման ապահովումը: Մեր կողմից վերլուծվող բժշկական սարքավորումների, հատկապես հեռավոր վայրերում դեղորայքային ապահովման խնդրի առնչությամբ ռազմավարությունում նշվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հիվանդանոցների կառուցվածքային մոդելի մշակման մասին, որը, հաշվի առնելով ճանապարհային ցանցի առկայությունը, բնակավայրերի և հատկապես գյուղական բնակավայրերի միջև տարածությունը, հնարավորություն կտա պետական բյուջեից հատկացվող միջոցներն ուղղելու անհրաժեշտ և որակյալ բժշկական օգնության և սպասարկման ապահովմանը:


Այսպիսով, հատուկ ուշադրություն պահանջող խնդիրներից է հեռավոր վայրերում (Հայաստանի Հանրապետության հեռավոր մարզերում) բժշկական ծառայությունների մատչելիության խնդիրը, դրանցում բարձր որակավորում ունեցող կադրերի բացակայությունը: Բժշկական հանցագործությունների վերաբերյալ ՀՀ դատական պրակտիկայի վերլուծությունը վկայում է այն մասին, որ յատրոգեն հանցագործությունների զգալի մասը բաժին է ընկնում հենց հեռավոր բնակավայրերին, ինչը կրկին արդիականացնում է առողջապահության համակարգի զարգացման հարցը հենց ՀՀ մարզերում: Մասնավորապես, ռազմավարության մեջ նշվում է հեռաբժշկության, շտապ բուժօգնության, սանիտարական ավիացիայի ծառայությունների ընդլայնման անհրաժեշտության մասին՝ մարզերի բնակիչների համար, այդ թվում՝ նեղ մասնագիտացված, դժվարամատչելի և նորագույն ու թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական ծառայությունների հասանելիության ապահովման համար:

Յատրոգեն հանցագործությունների տարածվածության վերաբերյալ դատական պրակտիկայի նյութերի վերլուծության արդյունքները՝ ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի ներկայացված են ստորև:

<sup>21</sup> Назаров И. П., Деонтология и врачебная этика в хирургии, анестезиологии и реаниматологии // Сибирское медицинское обозрение, 2004.

<sup>22</sup> Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման:


Յատրոգեն հանցագործությունների տոկոսային  
հարաբերակցությունը Հայաստանի  
Հանրապետության տարբեր մարզերում



Ինչպես տեսնում ենք, գերակշռող մեծամասնությունը բաժին է ընկնում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերին (72 %), ինչը, իհարկե, մտահոգիչ է: Միաժամանակ, եթե խոսենք ըստ մարզերի տոկոսային հարաբերակցության մասին, ապա առավել քրեականացված է Լոռու մարզը (յատրոգեն հանցագործությունների 15% - ը):


Բժշկական աշխատողի անձի մեկ այլ կարևոր քրեաբանական հատկանիշ է (սոցիալ-ժողովրդագրական) սեռը: Հաշվի առնելով գենդերային դերային գործոնները, որոնք ազդում են մասնագիտության ընտրության վրա, որպես կանոն, բժշկական հանցագործությունների մեծ մասը կատարվում են իգական սեռի ներկայացուցիչները, սակայն Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի վերլուծությունը, որքան էլ տարօրինակ է, հակառակն է վկայում:

**Բժշկի սեռը**



